«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արտադասարանական ընթերցանության կազմակերպման առանձնահատկությունները հիմնական դպրոցում և մեթոդական երաշխավորություններ

Առարկա՝ Գրականություն

Ուսուցիչ՝ Նաիրա Աբրահամյան

Դպրոց՝ Մ. Նալբանդյանի անվան հ. 33 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Ընթերցանությունը՝ որպես ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ միջոց 6
Ընթերցանության դասերի կազմակերպման մեթոդները, անցկացման ձևերն ու տեսակները 8
Եզրակացություն 11
Օգտագործված գրականություն 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը կխթանի ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը և դրանց լուծման համար անխոչընդոտ ուղիներ փնտրելը:

Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր կլինեն սովորողների համար, այլև կունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ կնպաստեն սովորողների ստեղծագործական միտքի զարգացմանը:

Այդպիսի հնար է ընթերցանությունը, որը պետք է հոգեհարազատ և սիրված դառնա սովորողների կողմից:

ՈՒսումնասիրվող թեման պետք է լինի և մնա կարևորագույն և հետաքրքրություն առաջացնող, հատկապես նրանց համար, ովքեր ստանձնել են իրականացնել երեխայի կրթության ու զարգացման բարդ, միաժամանակ պատասխանատու գործընթացը:

Հետազոտության նպատակը

Երեխայի համար ստեղծել ընթերցանության այնպիսի միջավայր, որ այն հանձնարարություն դառնալուց զատ, վերածվի հաճելի զբաղմունքի՝ սովորողի վրա թողնելով մտավոր կարողությունների զարգացման ազդեցությունը, զարգացնի քննադատական մտածողությունը, ձևավորի ընթերցողական արդյունավետ գործունեություն, կարողություն և սովորություն՝ նրանց մղելով գրքի շուրջ խորհելու մինչև տեքստի ընթերցումը, ընթերցման ընթացքում և ընթերցումից հետո:

Հետազոտության օբյեկտը՝ Ընթերցանության գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ Միջին տարիքի դպրոցականների մտավոր կարողությունների զարգացմանը նպաստող ստեղծագործական և ճանաչողական մտածողության զարգացման գործընթացը:

Հետազոտության հիմնական նպատակի և վարկածի համաձայն առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- Ծանոթացնել սովորողներին տարիքային մտածողությանը բնորոշ գրականության նմուշներին, որոնք կարելի է ներառել միջին տարիքի դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ, հետաքրքրություն ձևավորելով գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ:
- Կատարելագործել սովորողների՝ գրքերն ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունների զարգացումը՝ մշակելով ընթերցողական մտահորիզոն:
- Դիտարկել միջին տարիքի սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը ՝ նպաստելով քննադատական մտածողության զարգացմանը՝ հիմնավորելով կիրառման հնարավորությունների ազդեցությունը դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման գործում:
- Սահմանել դրա կիրառության արդյունավետ մանկավարժական պայմանները:

Հետազոտության գիտական վարկածը՝

Միջին տարիքի դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված ստեղծագործական մտածողության տեխնոլոգիան կլինի արդյունավետ, եթե.

- վեր հանվեն ստեղծագործական մտածողության հիմքերը' հաշվի առնելով միջին տարիքի դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունները,
- բացահայտվեն միջին տարիքի դպրոցականների քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությանը նպաստող հիմնական պայմանները,

- առաջարկվող ընթերցանության նյութը համապատասխանեցվի միջին տարիքի դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկություններին, մտածողության զարգացմանը:

Թեմայի տեսական նշանակությունը

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Գիտելիքների ամբողջության յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների:

Նման խնդիրները չափազանց արդիական են և միաժամանակ ունեն շատ խորը արմատներ:

Թեմայի գործնական նշանակությունը

Ընթերցանության համար խթան կարող է հանդիսանալ ուսուցումը հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը:

Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր կլինեն դպրոցականների համար, այլև կունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ կխթանեն սովորողների ոչ միայն ինքնուրույն ընթերցանության կազմակերպմանն ու իրագործմանը, այլև կնպաստեն ստեղծագործական միտքի զարգացմանը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Ընթերցանությունը սովորողների ճանաչողական մտածողությունը զարգացնող գործընթաց է՝ ուղղված տեքստի ընկալմանն ու հասկացությանը, ինչպես նաև լեզվական կարողությունների յուրացմանը, հաղորդակցության, տեղեկատվության և գաղափարների փոխանակման միջոցներից մեկն է:

Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է, որը ձևավորվում է նախնական գիտելիքների, փորձի և կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով և սոցիալական վիճակով:

Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում և քննադատական վերլուծություն: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում: Ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ընտրելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ինչպես նաև ընթերցանությունը հնարավորություն է ընկալել, հասկանալ տեղեկատվությունը, գրված այս կամ այն միջոցով, վերարտադրել տեխնիկական սարքերով:

Ընթերցանության տարրական հմտություններ չունենալն է պատճառը, որ երեխաները չեն կարողանում հավուր պատշաճի աշխատել տեղեկույթով, ունակ չեն ստեղծագործաբար մտածելու, չունեն գործնականում կիրառելու հմտություններն ու կարողությունները, անվարժ են գտնելու խնդիրների յուրօրինակ լուծումներ:

Այսօր պետության կողմից դպրոցի առջև դրված պարտավորություններից մեկն էլ՝ զարգացած, կիրթ, բարոյապես ձևավորված և սոցիալապես ակտիվ քաղաքացիներ ունենալն է:

Դեռևս ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելը անհրաժեշտություն էր: Իսկ այսօր պատկերն այլ է:

Հարց է առաջանում. ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի այն երեխայի համար դառնա ոչ թե պարտադրված անհրաժեշտություն, այլև վերաճի ու դառնա հաճելի ու սիրված զբաղմունք:

Բանն այն է, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում հատկապես տարրական դպրոցում: Տարրական դպրոցում դասավանդողները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը, իսկ ավելի դժվար է, ձևավորել իսկական ընթերցող դառնալը: Չէ՞ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը չի նշանակում դեռևս դառնալ ընթերցող: Գլխավորը ընթերցումը պետք է կազմակերպել այնպես, որ այն խթանի անձի զարգացմանը:

Զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Տարրական, ինչու ոչ, նաև միջին դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտի մեջ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: Սակայն ուսուցիչը կարող է ոչ միայն օգնել, որպեսզի երեխան դառնա ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ (բավական է երեխային ստիպողաբար պարտադրելը, տվյալ երեխայի հետաքրքրություններից շատ տարբեր գրքեր առաջարկելը, սկզբնական ընթերցանության ժամանակ ծավալուն գիրք առաջադրելը, սխալ տառատեսակով գիրք առաջարկելը և այլն):

Տվյալ թեմայի վերաբերյալ մայրենիի և գարկանության դասին հանձնարարված գրականություն ուսումնասիրելով՝ երեխան ինքնաբերաբար մտնում է ընթերցողական դաշտ և կապվում գրքին:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենիի դասընթացում իրենց ուրույն տեղն են գրավում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակը գրքի, ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացումն է և այդ ճանապարհով նրանց մեջ անձնային դրական որակների ձևավորումը:

Մեթոդապես ճիշտ և համակարգված ընթերցանութան կազմակերպումը նպաստում է կրթադաստիարակչական մի շարք խնդիրների լուծմանը:

Ընթերցանության նվիրված դասերի տեսակները կարող են լինել տարբեր՝ նայած, թե ինչ է նպատակադրել ուսուցանողը: Ի դեպ, նպատակները կարող են լինել մի քանիսը, ասենք՝ հանդիպում-քննարկում, վերլուծություն-բանավեճ և այլն:

Շատ կարևոր է ճիշտ նախապատրաստվել տվյալ դասին, օգտագործել տարբեր մեթոդներ, օրինակ՝ Էդվարդ դե Բոնոյի վեց գլխարկների մեթոդը, դերախաղ, կրկնակի գրառման օրագիր, ձնագնդի և այլն:

Դասի ընթացքում, որպեսզի ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծանա, կարելի է օգտագործել ՏՀՏ համակարգ՝ նախապես պատրաստելով քննարկվող գրքի վրաբերյալ հետաքրքիր նյութեր ու առաջադրանքներ:

Շատ կարևոր է դասին ներգրավել նաև այն սովորողներին, որոնք առաջադրված ստեղծագործությունը կամ գիրքը չեն ընթերցել։

Կարելի է նրանց գրքի բովանդակության վերաբերյալ փոքրիկ իրավիճակներ առաջադրել՝ պահանջելով գտնել լուծումներ, ընթերցել և վերլուծել տալ փոքրիկ հատվածներ, կերպարների վերլուծության վերաբերյալ հարցնել նաև իրենց կարծիքը և այլն։ Նման ձևով ուսուցանողը ընթերցանության նկատմամբ անտարբեր սովորողի մոտ կառաջացնի ընթերցանության նկատմամբ մոտիվացիա։ Հակառակ դեպքում անտարբեր վերաբերմունքը կմեծացնի անջրպետը գրքի և ընթերցանության չձգտող սովորողի միջև։

Ընդհանրապես քաննարկվող ստեղծագործության կամ գրքի վերլուծության ժամանակ անպայման պետք է զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը, նպաստել ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ստեղծել միջառարկայական կապ, ինչպես նաև կապ ստեղծել իրական կյանքի հետ։ Պետք է հասնել նրան, որ դեռահասը կամ պատանի ընթերցողը հայտնվի գրքում, իրեն՝ որպես գրական կերպար փնտրի, գտնի այնտեղ, որպեսզի վատ արարքներով աչքի ընկնող հերոսներին անտեսելով՝ ձգտի ու նմանվի լավին։

Ընթերցանության կազմակերպումը պետք է նպաստի և՝

● զարգացնի սովորողի տրամաբանությունը, հնարամտությունը կերպարային մտածողությունը,
● ըստ բարդության աստիճանի՝ լինի տարբեր մակարդակների,
● ունենա գործնական նշանակություն և միջառարկայական բովանդակություն,
● լինի հետաքրքրաշարժ ձևով, բովանդակությամբ կամ լուծման միջոցներով,
● ունենա անսպասելի ավարտ։

Ստորև կներկայացնենք ընթերցանության դասերի կազմակերպման մի քանի ձևեր և տեսակներ։

1. դաս-ցերեկույթ

Կազմակերպել ընթերցած գրքերից որևիցե մեկին նվիրված միջոցառում։

2. դաս-քննարկում

Ընտրել այնպիսի գիրք, որն ընթերցել են դասարանի սովորողների մեծ մասը և դրա շուրջ կազմակերպել քննարկում։

3. դաս-հանդիպում

Ժամանակակից գրականության հեղինակների հետ կազմակերպել հանդիպում, ում գիրքը սովորողներն արդեն ընթերցել են կամ պետք է ընթերցեն։

4. դաս-հանելուկ

Ընթերցած գրքի վերաբերյալ առաջադրել խնդիր՝ քայլերի վերլուծությամբ հասնելով առաջադրած նպատակին։

5. դաս-բնանկար

Անդրադառնալ ընթերցած գրքի նկարագրական հատվածներին՝ զարգացնելով սովորողների ստեղծագործական կարողությունները։

6. դաս-դիմանկար

Ընտրել ընթերցած գրքի հերոսներից մեկին կամ մի քանիսին՝ կատարելով կերպարային վերլուծություն։

7. դաս-մրցույթ

Կազմակերպել մրցույթ՝ հարցերն առաջադրելով ընթերցած գրքերից։

8. դաս-ճանապարհորդություն

Այցելել այնպիսի վայր, որտեղ ապրել է հեղինակը կամ կատարվել է ընթերցած գրքում նկարագրվող գործողությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը դրված է ուսուցման հիմքում և համարվում է կյանքի ամենաանհրաժեշտ հմտություններից մեկը։

Մարդիկ, ովքեր կարողանում են լավ կարդալ, իրենց ներդրումն են ունենում ծաղկող, աշխատունակ հասարակության ստեղծման գործում։ Միաժամանակ հենց իրենք ապրում են ավելի հագեցած կյանքով։

Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի, անձի զարգացման և կրթության հարցում։ Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ։ Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը՝ հեռուստատեսությունը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ։

Ընթերցանությունը կոչված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները։ Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքները։ Հենց դրա միջոցով է իրականանում մի սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին։

ՈՒրեմն, եթե նպատակադրել ենք ունենալ կիրթ, գրագետ, բարոյական հարուստ որակներ ունեցող քաղաքացիներ, ապա նրանց ֆիզիկական, աշխատանքային, գեղագիտական, բարոյական, մտավոր դաստիարակության համախմբում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք ընթերցանության վրա՝ համարելով այն անձի զարգացման կարևորագույն ուղիներից մեկը։ Պետք է այնպիսի հմտություններ ձևավորենք, որ ընթերցանությունը ինքնաբերաբար վերաճի և վերածվի առանց պարտադրանքի ինքնուրույն ընթերցանության։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թադևոսյան Թ., Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց, «Նախաշավիղ»,6. 2015,
2. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում, «Նախաշավիղ», 2006, N6
3. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978